

ՀԵՐԱԿՈՒՄ
ՄԸՆԴՈՒԹՅՈՒՆՈՅՑ
ՄԵԶ ԵԳՈՅ

ԱՅՍԻՆՔ Ի ՄԱՅՈՐԻՑ ԱՐԱՐԱՔ
ՅՈՒՂՈՒՅՈՒՆ

ԵԿ

ԱՎԱՐԵԲԻ ՎԵՐՖԵՎՈՒԹՅՈՒՆ


ԳԻՒՇՈՈՒԹՅՈՒՆ

ՀՈՎՈՎԵԱԿԱ ԱՎՐԲ ԵԿԵՊԵՑԱՅ

ԳՐԱԾԹԵԿ

* Ի ԱՊՐԵԼԻ ԹԵՇԱՅԻՆ ԱՎՐԲ

— 1854 —







ՀԵՐԹՈՒՄՆ

ՄԵՍԻ ԼՐԱԳՐՈՅՑ

Մ Է Զ Ե Պ Ա Ֆ Ա Ծ

Ա Խ Ա Վ Ա Ր Ա Բ Ի Ա Մ Ա Խ Ա Վ Ա Ր Ա Բ

Յ Օ Գ Ա Խ Ե Յ Ա Յ Ց

Ե Կ

Ա Խ Ա Վ Ա Ր Ա Բ Ա Մ Ա Խ Ա Վ Ա Ր Ա Բ

Գ Ա Խ Ա Վ Ա Ր Ա Բ Ա Յ Ց

Հ Ա Խ Ա Վ Ա Ր Ա Բ Ս Ո Ւ Բ Բ Ե Վ Ա Յ Ց

Ե Ր Ա Խ Ա Վ Ա Ր Ա Բ Ի Վ Ե Ր ա լ զ գ ի ս լ ր ա գ ի բ ն ե ր ը շ ա տ բ ա ն ե ր
գ ր ե ց ի ն ը ն դ գ է մ Ա խ ի թ ա ր ե ա ն ց և ը ն դ գ է մ Հ ո վ մ է ա կ ա ն ե -
կ ե ղ ե ց ւ յ ն ։ Ե ս ո ն ց գ ր ա ծ ը ո ՞ ր չ ա փ ա ն ց ի ր ա ւ ա ն ց ։ բ ա յ ց
կ ա յ ի ն ո ր ք ի չ մ ը խ ո հ ե մ ա ր ա ր գ ր ու ա ծ է ի ն ։ և կ ա յ ի ն ո ր խ ի ս տ
յ ա ն դ ու գ ն և ա ն խ ո հ ե մ ։ ո ր ո ն ց ի ն չ ու ա յ ս օ ր ս ա ւ ե լ ր դ հ ա մ ա -
ր ե ց ա ն ք պ ա տ ա ս ի ս ա ն ե լ ։ գ ի տ ն ա լ ո վ ո ր կ ա տ ա ր ե ա լ լ ո ւ թ ի -
ն ը ա յ ն պ ի ս ի հ ա կ ա ռ ա կ ա խ ա ս գ ր ու թ ե ա ն ց ա ր ժ ա ն ա ւ ո ր պ ա տ ա ս -
խ ա ն ն է ։ մ ի ա յ ն կ ը ց ա ւ է ի ն ք ո ր լ ր ա գ ր ա ց կ ա ր ե ւ ո ր ե ր ե ս ն ե ր ը
կ ր օ ն ա կ ա ն ը ն դ դ ի մ ա խ օ ս ո ւ թ ի ս ն ե ր ո վ կ ը ծ ե փ ու է ի ն ։ Ե ս ո ն ց մ է
մ է կ ը ե լ ա ւ ա ն ց ե ա լ ն ե ր ը Ա խ ի ս լ ր ա գ ր շ ն 114 թ ի ւ ը ։ ո ր ո ւ ն
մ է զ կ ա ր դ ա ց ի ն ք յ օ դ ու ա ծ մ ը լ ի ն ա խ ա տ ա ն ա ց ի ս ո ւ ք ե ր ո ւ լ ը ն դ -



դէմ Հռովմայ սրբազնն Պապերուն և Ախիթարեանց, որն որ
ալ մեր լոռութեան չափը լեցուց, և միտք բերինք իմաստնշն
այն խօսքը թէ Ճամանակ կայ խօսելոյ և ժամանակ կայ
լուելոյ . ուստի մեր լոռութիւնն ալ կը լուծենք որպէս զի
շըլայ թէ մեր լոռութեամբը ոմանց հոգեկան և մարմնական վը-
նաս մը պատճառէ, անոր համար առ այժմ գէթ հարեւանցի
մը կը պատասխանենք այն անիրաւ թշնամանացը : Այս յօ-
դուածը ո՞րչափ բարկութիւն և զարմանք միանգամացին պատճա-
ռեց մեղի, չենք կրնար բացատրել : Իարկութի՞ն, վասն զի
չէինք յուսար ամենեին որ մարդուս վրայ այս աստիճան լըր-
բութիւն և յանդգնութիւն կարենայ երեկիլ . զարմա՞նք, վա-
սըն զի չէինք կարծեր որ տգիտութիւնը այնչափ յաղթանակէ
մարդուս վրայ, որով լոյսը խաւար, խաւարը լոյս դնէ մէկը :
Եթէ այս յօդուածը առանձին տեսր մի տպագրած դուրս
ելլէր, այնչափ չէինք զարմանալ և ցաւիլ, վասն զի կ'ըսէինք
թէ մասնաւոր մարդու կարծիք է, ո՞րչափ որ կը տեսնենք
աղդային լրագրոյ մէջ տպագրած, և այնպիսի լրագրոյ մէջ ո-
րուն պատասխանատուութիւնը կը կարծենք որ պատրիար-
քարանին եկեղեցական և աշխարհական ժողովները վրանին ա-
ռած են : Որով և բովանդակ ազգը արհամարհելի կ'ըլլայ
այնչափ բազմութեան երեկելի ուսումնականաց Եւրոպիոյ, և կը
բամբասուի անոնցմէ չէ թէ միայն որպէս հերձուածող, հապա-
նակ տգէտ և անտեղեակ իր նախնեաց վարդապետութեանը :

Այս յօդուածին մէջ սրբազնն Պապերուն ոմանց սուտ
կամ իրաւ անվայել գնացքը մէջ բերելով, անով հեղինակը
կ'ուզէ մուր քսել Հռովմէական եկեղեցւոյն վրայ, որոյ գը-
լուկ սրբոյն Պետրոսի առաքելապետին յաջորդներն են, և ան-
կէց հարկաւ հետեւցընել թէ այս եկեղեցւոյն հետևողն են յի-
մարք և մոլորեալք, և միայն ինքն և իւր համամիտք են ի-
մաստունք և անմոլարք :

Հոս լաւ կ'ըլլար մէկիկ մէկիկ այն բերած վարդերը քըն-

նել ճշմարտասէր և ուղղախոհ պատմիչներ մէջ բերելով, որ-
պէս զի ցուցանենք թէ ո՞րչափ ստութիւն և խարդախութիւն
մտած է այն վարքերուն շատին մէջ :

Ի՞այց Խօսքերնիս աւելորդ տեղը չերկընցընելու համար,
կ'ըսեմբ միայն թէ որ ամէն զրուցուած կամ գրուած բաները
իրաւ ըլլային, պէտք էր որ հաւատայինք ամէն զրպարտու-
թեանց, և ամէն անիրաւ գործոց իրաւոնք տայինք : Ի՞այց
Ենթադրենք ալ որ այն վարքերը ամէնքն ալ ստոյդ ըլլան,
և սակայն ինչպէս կրնանք անկէց հետեցընել թէ չոռվմէա-
կան եկեղեցին մոլորեալ է, և չէ Պետրոսի առաքելապետին
յաջորդութիւնը, որով և կարենանք Խորշիլ անկէց և չը-
նազոնդիլ :

Ի՞աւական և բաւականէն ալ աւելի գրութիւնք եղած են
ցուցանելու համար թէ Պետրոսի առաքելապետին յաջորդու-
թիւնը բոլոր աշխարհ տարածուած ընդհանուր քրիստոսական
եկեղեցւոյն գլուխ կարգեալ է 'ի Կրիստոսէ Տեառնէ մերմէ :
Ճշմարտութեան սէր ունեցողները և աննախանձ սրտիւ փա-
փագողները թող կարգան զանոնք :

Յիշաւի փափագելի բան էր որ ամէն եկեղեցւոյ զը-
լուխ կեցած անձինքը ՎՐ. Քրիստոս կերպարանէին յինքեանս
սրբասէր կենօք և ուղիղ քաղաքավարութեամբ, բայց
գիտենք որ ՎՐ. Քրիստոս իր եկեղեցին բոլորովին մարդու չը-
յանձնեց, և ոչ յարութենէ ետքը հեռացաւ մեկնեցաւ ան-
կէց, վասն զի կ'ըսէ « Ոչ թողից զձեզ որբս ո . ուստի ե-
կեղեցւոյ գլուխներէն ոմանք մարդկային տկարութեամբ դգա-
ծեալ թէ որ անվայել կեանք մը վարեն, անով քրիստոսա-
կան եկեղեցւոյն արատ մը չգար, որոյ բուն աներեսոյթ գլուխն-
է ինքն տէրն մեր Յիշաւս ՎՐ. Քրիստոս, հապա միայն իրենց
անձանցը կը վնասեն : Վասն զի իրենց մեղադրելի վարքը
չուսուցին իբրև օրինաւոր և հաւատոյ վարդապետութիւն :
Ոչ ոք ուղղափառ ըսած է որ Պապն անմեղանչական է, հա-

պաթէ՝ Հռովմայ սուրբ եկեղեցւոյն վարդապետութիւնը ուղղափառական է միշտ և անսխալ : Հակառակորդը ասոր ներկալը ցուցանելու էր մեզի, չէ թէ անձնական վարքերը սուտիրաւ քննել : Եթէ հոս այլեալ ազգաց առաջնորդաց ոմանց և վարդապետաց անկարդ գնացքը և անօրէնութիւնքը ուղիւնք շարել և ցանկ մը ընել, ինչպէս որ ըրած է յօդուածին հեղինակը Հռովմայ սրբազն այրապետներուն վրայ, գիտենք անշուշտ որ կը սարսէին կը քստմէին ընթերցողը . և չուզելով կ'ըսեմ, թէ հեղինակին այն խօսքերը որ կ'ըսէ Հռովմայ աթոռոյն համար, թէ « Միայն իր մոլութիւններով վը ծանօթ եղած է մեզի, և երբէք կամ շատ քիչ իր առաքինութիւններով » . և թէ « Չիկայ աշխարհի վրայ աթոռ մը ուր առաջինութիւնը այնչափ քիչ տեսնուած ըլլայ, որ չափ պէտք էր մոլութիւնը քիչ տեսնուէր » , այս խօսքերը օտար եկեղեցեաց վրայ աւելի ճշմարտութեամբ հաւաստած կը տեսնէր . ու ինքը որ շնորհակալ կ'ըլլայ ութեւտասներորդ և իննետասներորդ դարերուն, որոնց մէջ դադրեցաւ կ'ըսէ Հռովմայ քահանայապետաց բանութիւնները, նոյն դարերը կը բողոքեն իր ամենագովելի արևելեան եկեղեցեաց առաջնորդներուն ըրած բարբարոսական դործոցը . որոնք ստուգելու համար բաւական է միայն միտք բերել մեր ազգին մէջ 1828ին և 1829ին հակառակ քիստոսական ոգւոյն եղած անօրէն դործերը, որոնք անհնար է յիշել առանց կարմրնաւու : Ինայց լաւ է չյիշուելու բաները բերան չառնուլը և լոռութեամբ անցնիլը, վասն զի չենք ուզեր թշնամանողական պաշտպանողական զէնք գործածել . և ոչ իսկ ազգերնիս նախատել և արհամարհել, և կամ մասնաւորաց պակասութիւնները թէ յեկեղեցական կարգէ ըլլան և թէ յաշխարհական կարգէ ընդհանուրին ընծայել :

Քրիստոս աէրն մեր աստուածային նախատեսութեամբ գիտնալով որ երբեմն երբեմն պատրիարքական և եպիսկոպո-

ատկան աթոռները նստին պիտի անարժան անձինք, օրինակաւ մեզի բացատրեց, ըսելով յայտնապէս, թէ և Յաթոռն Առվ սեսի նստան գպիրքն և փարիսեցիք ո, բայց չըլլայ որ անոնց վարքէն հաւատոյ ծուռ հետեւութիւն մը հանենք, կ'ըսէ անմիջապէս թէ և Օամենայն զոր ինչ ասեն ձեղ արարէք, բայց ըստ գործոց նոցա մի՛ առնէք ո, Անմեղանչականութիւն և անյանց ըլլալ, աստուածութեան միայն արուած է, մարդկութեան ոչ երբէք . ուստի ո'չչափ կը սխալինք թէ որ մասնաւոր Քահանայապետներուն վարքէն ընդհանուրին վրայ հետևանք հանենք, և անով յանդգնինք Հռովմայ աթոռոյն սըխալականութիւնը ցուցանել :

Յօդուածին հեղինակը Արբազան պապերը նախատելու մտքով Հռովմայ ժողովոգեան վարմունքը մէջ կը բերէ, որով երկու իրարմէ զատելու մեծամեծ խնդիրներ իրարու հետ կը խառնէ, և ինքն իրեն հակառակիսուելով կ'ուզէ արատ քսել Հռովմէական եկեղեցւոյն սրբութեանը վրայ . որոյ մէջ եթէ կան գէշ մարդիկ թէ յեկեղեցական կարգէ և թէ յաշխարհական կարգէ, կան նաև շատ աստուածարեալ անձինք : Ինյց կ'ուզէինք գիտնալ թէ ո՛ր ազգն է կամ քաղաքը ըյսօրուան օրս որ քան զ Հռովմ աւելի բարեպաշտ և առաքինի ըլլայ : Այս խօսքիս Ճշմարտութիւնը կընան անոնք միայն գիտնալ, որոնք Լուրոպա և Ասիա պըտըտեր ու տեսներ են : Ունէ որ մէկուն գնացքէն կարենայինք իրեն հաւատքը հետեցընել, այն ատեն պէտք էր քրիստոսական հաւատքին արատ դնէինք, որ քա՛ւ լիցի, որովհետև և ոչ մէկերնիս կընանք խղճմտանօք կատարեալ քրիստոնեայ համարի ինքզինքնիս : Անոր հակառակ այլազգեաց մէջ կան այնպիսի ընտիր և առաքինի և խղճմտանքաւոր անձինք . որոց հաւասար շատ անգամ գժուարաւ կը գտնուի . քրիստոնէից մէջ միթէ կընանք հետեցընել թէ ուղիղ է իրենց հաւատքը և վարդապետութիւնը : Տես հեղինակին ծուռ տրամարանու-

թիւնը որպիսի սիալ և մոլորական հետևանքներու մէջ կը թիւնը որպուցելը թէ քրիստոնէական աստուածածկէ : Ուրիշ է զրուցելը թէ քրիստոնէական անձանց վարքը պէտք էր որ առյին կրօնի պաշտօնատար անձանց վարքը պէտք էր որ առտուածային ըլլար , ինչպէս էր հին քրիստոնէից . ուրիշ է զրուցելը , թէ որովհետեւ հիմակուան քրիստոնէից վարքը գէշ է , ուրեմն և կրօնն ալ գէշ է , որ բոլորովին սխալ հետեւանք է : Կամ մասնաւորելով , թէ որովհետեւ այս ուղղափառ աթոռոյն հետևող ժողովրդեան վարքը գէշ է , ուրեմն աթոռն ալ սուրբ չէ :

Կը զրուցէ յօդուածին հեղինակը թէ , և Հոռվմայի աթոռը կը ջանայ տէրութեան մը ազգի մը գերդաստանի մը մէջ սէրը և միաբանութիւնը և եղայրսիրութիւնը հեռացընել , լուսաւորութիւնը և քաղաքակըթութիւնը խափանել ո . ասոնք ամէնքն ալ նորաղանդից խօսքեր են , որոնք շատ անգամ կարդացեր ենք անոնց գրքերուն մէջ և լսեր ենք : Ամէն խելացի մարդիկ կ'ըսեն թէ թշնամոյ խօսքը շատ անգամ հեռի կ'ըլլայ 'ի ճշմարտութենէ և խարխուլ հիման վրայ հաստատեալ . թող որ նոյն իսկ նորաղանդից մէջէն խելացիները , յայտնապէս կը վկայեն թէ Պապերուն շատերը երևելի եղած են վարուք գիտութեամբ և քաղաքականութեամբ : Եթէ երբեմն Հոռվմ հակառակորդին ըսածներուն համեմատ գործած տեսնուի , թշնամին պէտք է ներսէն փընտունել և ոչ գրսէն , վասն զի գիտենք որ ներքին թշնամին քան զարտաքին թշնամին շատ աւելի վնասակար է : Բայց նուև ճշմարտութիւնը գիտնալու համար գնա կարդա Ներսէս Պալիենցին պատմութիւնը , որ էր Որմեայ եպիսկոպոս , և կը սովորիս յանցանքին տէրը թէ Հոռվմ է չէ նէ Պալիենցը , և իւր գործակիցը Ոիմէոն պէկ լարնոյ եպիսկոպոսը : Եթէ բաղդաբար այսպիսի Պալիենցներ չեն պակսած ազգերնուս մէջ շատ անգամ : Բաց ասկէց պէտք է գիտնալ նաև , որ Հոռվմայ գահն ալ ըստ ինքնան մէկ հոգևոր թագաւորու-

թիւն մը ըլլալով , ունի իրեն մասնաւոր պաշտօնատեղիներ և պաշտօնատարներ , որոնք թէ որ երեքն արտաքին գործոց մէջ ստոյդ տեղեկութիւն չառնլով տեղեաց հեռաւորութեանը և անձանց բաւական ծանօթութիւն չունենալուն պատճառաւ , թէ որ անյարմար գործողութիւն մ'ալ ընեն կամ որոշեն , որ չէ հաւատոյ խնդիր , անկէց ամենեին վնաս մը չգար սրբազն Պապին գլխաւորութեանը և իւր եկեղեցւոյն . վասն զի ա՛լ է Հռոմէական եկեղեցին , և ա՛լ նոյն եկեղեցւոյն գլուխը ու իր պաշտօնատարները և պաշտօնատեղիները :

Յայտնի բան է որ կիրքն ու պատճառարանութիւնը մէկտեղ չեն կրնար զուգընթանալ . պատճառարանութեամբ խօսողը կիրք չբանեցըներ , կրիք խօսողը բոլորովին կը կորուսանէ պատճառարանութիւնը : Այսպէս Մասիսին հեղինակը կրիք լցեալ առանց ամենեին պատճառարանելու կ'ուղէ իմաստակական և անկրօնական ծաղրաբանութեամբ Հռոմայ քահանայապետաց յարդը նուազեցընել , ըսելով թէ Երկինքը արբայութեան մէջ կանգնով տեղ կը ծախեն . և թէ ապագային մէջ գործուելու մեղաց կանխաւ թողութիւն կուտան : Կ'երեկի որ յօդուածին հեղինակը նոր Հռոմէական եկեղեցի մը երեւակայեր է , որոյ Պապերը այսպիսի իշխանութիւններ կ'ունենան կոր . վասն զի մեր յարգած ու պատուած Արքազան Պապերը այսպիսի իշխանութիւններ չունին : Դարձեալ կը բամբասէ թէ աշխարհք ապականող Ճ'իզուիթները 'ի թիւս սրբոց կը դասեն : Խողունք այն խնդիրը թէ Ճ'իզուիթները վեասակար եղեր թէ օգտակար , ըսենք միայն թէ ո'վ կրնայ զրուցել որ այնպիսի կը րօնի մէջ ուր բիւրաւոր միանձունք առաջ եկեր են ու երեւլի քարոզիչներ ելեր են , չկարենան սրբակաց անձինք գտնեւիլ . միթէ այսչափ տկար կը համարի Ըստուծոյ կարողութիւնը : Խակ սրբոց ոսկորներուն մասունքը ծաղրելը ու յան-

Դըգնաբար ոչխարի կամ կովու ոսկոր կոչելը , որն որ անվա-
յել է քրիստոնէի բերնին , ուրիշ բան չէ եթէ ոչ բոլոր
քրիստոնէութիւնը ու նաև իրեն ազգը ու եկեղեցին ծառ-
բել . ուստի անոր վրէժիսնդրութիւնը կը թողունք իր եկե-
ղեցւոյն պաշտօնեայներուն , որոնք կը գոչեն բարձրաձայն .
և Աւենդանի ոսկերքը սոցա հիւանդաց թիշկ “ :

Այսպէս յօդուածին հեղինակը սրբազան Պապերէն ո-
յանց անընդունելի վարքը , նմանապէս և ուրիշ կարկատուն
և փցուն պատճառներ մէջ բերելով և նախատալից խօսքեր
դիշելէն ետե , լրբարար ամենայն քաղաքավարութեան օ-
րէնք ոտքի տակ առնլով , ու մարդկութեան և ոչ պղտի նը-
շուլ մը վրան թողլով , կը պոռայ կը կանչէ . “ Չենք Ճանչ-
նար Պապին ոչ միայն Աստուծոյ փոխանորդ , հայր ամե-
նայն հաւատացելոց , Քրիստոսի եկեղեցւոյն գլուխ և հո-
վուապետ և կեղբոն ըլլալու պաշտօնը , որ Աստուծոյ դէմ
հայհոյութիւն է , այլ և ոչ իրեւ ժամկոչ և դռնապան Քր-
իստոսի եկեղեցւոյն . և թէ “ Անր գեղացի պարզ համեստ
և բարեպաշտ քահանան , Հռոմի Պապէն անհամեմատ կեր-
պով բարձր և պատուական է մեզի ” :

Ո՞չ , որպիսի՞ յանդնութիւն , հարիւր եօթանասուն
միլիոն ժողովութիւն իրեն հետեւղ ունեցող պատկառելի Կր-
իսոյ մը , որուն վրայի քահանայապետական և թագաւորական
աստիճանին մեծութիւնը նոյն իսկ մեր () սմանեան կայսերու-
թիւնը կը Ճանչնայ կը յարգէ ու կը պատուէ , այսպիսի
ծանր նախատանաց խօսքեր զբուցել : Չգիտէր ողորմելին որ
Հայ կաթոլիկ ազգին դէմ գրելու ատեն , իրեն հակառակ
կը դրդու անբաւ բազմութիւն Աւրոպական ազգաց , որոնք
կ'ընդունին զսրբազան Պապերը յաջորդք սրբոյն Պետրոսի ,
և Քրիստոսի ընդհանուր եկեղեցւոյն գլուխ և հովուապետ
Քայլ պէտք է խղճալով կարեկից ըլլալ հեղինակին , որ իր
գեղին պարզամիտ , կամ լաւ ևս ասել տգէտ քահանան մեծ

բանի մը տեղ դնելով, կը բաղդատէ այսպիսի բարձրապատիւ
քաշանայապետի մը և թագաւորի մը, և քան զայն կը վե-
րադասէ ։ ալ ի՞նչ աստիճանի ինքը դիտուն ու նրբամիտ կ'ըւ-
լսյ, թող կ'արդացողները դառեն : Բայց աւելի մեզ ցաւալի
այն է, որ այսպիսի վատ և ամպարիշտ գրիշներու համարձա-
կութիւն տրուելով, անուանարկ ըրին զազգը բոլոր աշխար-
հի առջե, որոց վեասը Վերուժանայ և Վասակայ սրոյ և հրոյ
ըրած վեասներէն մեծ է, վասն զի կը մեռցընեն զազգը բա-
րցյապէս : Լաւ էր որ այսպիսի յօդուածներ գրողները պատ-
կերհանին առ կօշկակարն ըսած խօսքը միտք բերելով թէ
և կօշիկէն վեր մի՛ բարձրանար և այսպիսի կրօնական խըն-
դրոց մէջ չմտնէին, որոնք իրենց հասողութենէն և կարողու-
թենէն վեր բաներ են, և անով իրենց հետ ծաղրելի և
պախարակելի չցուցանէին բոլոր աղքը : Վասն զի Վատուա-
ծարանութիւնը որ քան զամէն գիտութիւն բարակ ու պա-
տուական է, ծիծաղելի ու թեթև բան մը կը համարուէր, ե-
թէ լրագրաց մէկ երկու էլին մէջ գրուելով լմբննար : Բազ-
մամեայ աշխատութեամբ ալեորեալ աստու ածարաններ հա-
զիւ կը համարձակին հաւատոյ իննդրոց մէջ ձեռնամուխ ըլ-
լալ, ո՞ւր մնաց տգէտ և անհմուտ անձինք : Եղո՞ւկ ազգին
որ իւր դատին և իրաւանցը այսպիսի պաշտպաններ ունի :

Վ'ըսէ հեղինակը, թէ « Չորս միլիոն ազգի մը կրօնա-
կան խիղճը վիրաւորուած ժամանակը, մենք ալ որովհետեւ-
նոյն բարեպաշտ ազգին սուրբ Եշեղեցւոյն զաւակն ըլլալու
բարերադութիւնն ունինք, կը կարծենք եթէ հրապարակաւ
եղած թշնամանացը առջեւ լուռ կենալու չափ անփոյթ չենք
կրնար ըլլալ ։ Եթէ ինքը չորս միլիոն ժողովուրդ չերնար
հրապարակաւ եղած թշնամանացը գէմլուռ կենալ, թէ և չեմ
դիտեր ո՞ր թշնամանացը, մենք ի՞նչպէս կարենանք լուռ կե-
նալ, որ հարիւր եօթանասուն միլիոն իրեն հետեւող ունեցող
Գլխոյ մը բարերադութեամբ որդիք կը կոչենք ինքինքնիս :

Աւ ո՞րչափ աւելի սաստիկ կ'ըլլայ մեր վիշտը և սրտին ցաւը
երբոր անհամբերելի թշնամնք դիղուին այնպիսի Գլխոյ մը
վրայ, որոյ անունը մեր սուրբ հարք և նաևնիք բազում մէ-
ծարանօք և յարգութեամբ բերան կ'առնուին :

Քաղկեդոնի ժողովքէն ետքը որչափ ալ ոմանք մեռկա-
թողիկոսներէն տգիտութեամբ և բանին եռթիւնը լաւ չհաս-
կընալով սխալեցան և ընդհանուր եկեղեցիէն գլուխ քաշե-
ցին, սակայն ոչ երբէք հաստատեցաւ ազգին մէջ առ հասա-
րակ այս իրենց յանդուգն կարծիքը, և ոչ իսկ շատ հաւ-
նողներ ունեցան իրենց հակասութեանը որոնք կարենացին
զլաւտիքէս նզովել, և անոր հետ զլաւտիքէս դատապարտող
Քաղկեդոնի սուրբ ժողովն ալ մերժել և զմեծն Լևոն նզո-
վել : Ուստի այս հակառակասիրութեան ոգին որ որջացաւ
առաւելապէս Հաղթատայ ձորերուն մէջ, ատելի էր ազգիս
կաթողիկոսաց շատերուն, որոնք ազգային ժողովներով ըն-
դունեցան Քաղկեդոնի սուրբ ժողովը, և որոնք մինչև ցը-
վերջ եօթնեւտասներորդ դարուն պահաս չէին ընէր երբեմն
երբեմն իրենց մեծարանաց և հպատակութեան նամակները Հը-
ռովմայ սրբազն Քահանայապետներուն, ու բովանդակ ազ-
գին վրայ եղած ամբաստանութիւնները ցրել իրբէ առաջի
մեծ դատաւորի . և անոնցմէ ընդունել օրհնութեան նամակ-
ներ և հոգեոր ու մարմնաւոր նպաստներ : Ըստնք քովիերնէս
չենք շիներ, ազգիս պատմագիրները գրեր են . Ճշմարտու-
թիւն սիրող մարդը ոչ պէտք է կոյր ըլլալ և ոչ խուլ, վա-
սըն զի Ըստուած ալ մեզ մեր գիտցածին կամ ընդունածին
համեմատ պիտի չդատէ, հապա իր գիտցածին և իր յայտ-
նած Ճշմարտութեանը համեմատ : Ի՞այց եղան ոմանք ազգին
մէջէն, որոնք առիթ առնլով թագաւորող սրբազն Քա-
հանայապետին Պիոսի իններորդի այս տարուան գետրվարի
երկուքին գրած յորդորական նամակը, չեն ընդունիր ազգիս
հայրապետաց Հոռվմայ սուրբ գահին հետ ունեցած կապա-

կցութիւնը ու բարեկամութիւնը որովհետեւ կարդացեր են այն նամակին մէջ « Օձ մեր նախորդ Հռովմայ Հայրապետները ... ո՛քափ փութով ատ ազգը 'ի կաթողիկէ միութիւն դարձընելու ջանացեր են . . . : Խնչ պտուղներ քաղեր են ատ ազգիդ վրայ ըրած ջանքերնէն, և ինչ ուրախութիւն ունեցեր են երբոր յաջողեր է իրենց որ կաթողիկէ միութեան դաւանութեանը դարձած շատ հայեր անոր մէջ հաստատուն և անշարժ մնան ։ Ի՞սց այս գրուածէն Հնետեկիր թէ Հայու ազգը միշտ 'ի Հռովմայ բաժնուեր է, որովհետեւ ժամանակ չէ որոշեր, և թէ « ջանացեր են ։ Ըսելով չուղէր ըսել, թէ բոլոր ազգը միշտ հերձեալ էր, վասն զի ազգային պատմութիւնը հակառակը կը ցուցանէ մեզի : Անաւանդ թէ յայտնի է որ Հռովմայ քարոզութիւնը արևելքի մէջ շատ ատեն չէ որ սկսած է, այլ կը հաշուի Տարածման հաւատոյ ժողովն հաստատութենէն, որ եղաւ Գրիգոր Ժէ, Պապին օրը 1622ին, որոյ վրայ իրեն յաջորդը Ուրբանոս ութերորդ աւելցուց Ուրբանեան ըսուած դպրոցը, որոյ մէջ կը կրթուէն նաև հայազգի տղայը և կը խրկուէին 'ի քարոզութիւն : Ուրբանեան դպրոցին հաստատութենէն ոչ շատ ետքը, այսինքն 1700ին հաստատեցաւ Ախիթարեան միարանութիւնը երանաշնորհ սեբաստացի Ախիթարայ քարդապետին ձեռքով, որոյ գլխաւոր նպատակն էր լուսաւորել զազգը գիտութեամբ և քարոզել զբանն կենաց : Առւրբ աթուը տեսնելով Ախիթարայ քարդապետին և անոր աշակերտացը պտուղները, ինչպէս կը վկայեն բովանդակ Հայաստանի քաղքըները ու գեղեցերը և նոյն խսկ Պաղատից գաւառը, որն որ գրեթէ բովանդակ դարձած է Ախիթարեան հարց քարոզութեամբը, արշաւու իրեն պատիւ Աքրայութեան և իշխանութիւն քարոզելց զնշմարտութիւն բովանդակ արևելքի մէջ : Ախիթարայ աբրազ վարի դիտմանը ոչ ստկաւ գործակից եղած է և իւր ժամանակակից Աքրահամ վարդապետը, Անտոնեանց միարանութեան հիմնադիրը :

Երամեն ըստածներնեւ յայտնապէս կը հետեւ, թէ Ուա-
սիս լրագրոյն հեղինակը և իւր համամիտք բացէ 'ի բաց կը
հակառակին իրենց նախնեացը և սուրբ հարց աւանդութեան-
ցը, որոնք յայտնապէս կը քարոզեն և կ'ընդունին սրբազն
Պապերուն գլուխորութիւնը, իբրև մայր ամենայն եկեղե-
ցեաց :

Ու թէ այս խօսքս ճշմարիտ է, կարդա հետեւալ մեր
սուրբ շարց և նախնեաց զրուցածները, Խոկ այն բարեմիտ
ժողովութը որ լրագիրները կարդալով կը հաւտան անոնց
խօսքերուն, թող կարդան այս վկայութիւնները ու իմանան,
թէ մա՞սք են ստախօսք թէ լրագրաց շարադրովները, մե՞նք
ենք մեր շայոց հին հարց հետեւովք, թէ ազգին նախատինք
բերող յօդուածներ գրովները :

Խորենաց 'ի ժամանականց : « Զայն աւետեաց հնչե-
ցէք յարեմուտս, փող 'ի ոռովլ հարեք : Օքաւարձացիր և
ուրախ լեր տիեզերական մայրաքաղաք, որ նստիս յարեմու-
տըս առաքելաջահ պսակեալ լուսով աշխարհատարած ճառա-
գայթիւք Ուրախ լեր և ցնծա ոռովլմայեցւոց եկեղեցի,
հարսն առաքելական, որ աւետարանին թէք 'ի քէն սլացան
յարեւելս » :

Եւնէց : Եթուղթն զոր գրեցին առաջնորդք և իշխանք
ազգին առ թէկոդոս փոքրն հանգերձ կաթողիկոսիւն ՀՅովսե-
փաւ, յիշեն զուխտն սիրոյ և միաբանութեան զոր եղեալ էր
Կոստանդիանոս ընդ արքային մերում Տրդատայ, և ապա ա-
մեն յաղագս նորին Տրդատայ . « Աղնապէս և զհաւաֆսն որ
'ի Քրիստոս ընկալեալ 'ի սուրբ Խաղիսկոպոսապետէն ոռով-
մայ, լուսաւորեաց զիստարային կողմանս հիւսիսոյ » :

Ծառացիս իտնողինս, « ՀՅառաջագոյն քան զծնանին 'ի Ծեմ-
շեհեմ տայ զերկրաւոր պետութիւնն 'ի ոռովլմայեցիսն, որ
ըրրորդ գաղանն անուանեալ 'ի Դանիէլ, քանզի 'ի ոռովլ
հանդերձեալ էր կարգել զաթոսն Պետրոսի և Պողոսի և

շալիսւորութիւն սուրբ եկեղեցւոյ, և զառովմայեցւոց թագաւորութիւնն կոչելոց եր'ի հաւատու, լինել գաւաղան քըրիստոսական՝ դաւանութեան 'ի վերայ դիմամարտից խաչին միջիստոսի ։

Ըստ Հովհաննէ. « Նա զի լուտք թէ սուրբ և առաջին ամենայն եպիսկոպոսապետաց հայրապետն ձոռվմայ, և փոխանորդն Պետրոսի առաքելցն ։ »

Ըստ Հովհաննէ յոդու Խոյեսոյ.

Ճայար յիրականական « Խւ դու ձոռվմ մայր քաղաքաց և առաջ մի մասոյ, լուս Գերապայծառ և պատուելի, մասունքը մարդու Անծէին աթոռութ Պետրոսի բաց սկզբան, մասու Եռաքելոց գըլխաւորի. յարդա յիրականական ակեղեցի անշարժելի սիրութիւն ունենալ կիմի, առաջ առաջ առաջ առաջ առաջ Տիրանց դժոխոց անյաղթելի առաջ մասնից Եւ կնիք երկնիցըն բացողի ։ »

Ըստ Հովհաննէ. « Կեցո զորդի ծառայի քո, զոր 'ի ձոռվմայ գահիցն վերապատուեցեր, ուր եղին զվեմն հաւատոյ հիման սուրբ եկեղեցւոյ ։ »

Գրէնոր հանողինս ճախառանեալ Եղիքատ և նույն իւր որ առ Խնաշէնուիս Գ. Պատ ձառնալոյ. « Գերակատար գլխափոխանորդ Պրիստոսի, և հաստատեալ 'ի նմանէ ինքնադրլութ պետդ եկեղեցւոյն ձոռվմայ, որ է մայր ալենայն եկեղեցեաց աշխարհի. Պրիգոր ծառայ Յիսուսի Պրիստոսի և շնորհօքն Եստուծոյ կաթողիկոս ամենայն ձայոց և որդի սուրբ եկեղեցւոյդ ձերոյ Յորժամ դուք որ եք գլուխ առողջ լինիք, և մեք որ եմք մարմին առողջասցուք օրհնութեամբ ձերով Եւ որպէս սովոր Եաք յառաջ նոյնպէս և այժմ ունիմք զնա (այսինքն զեկեղեցին ձոռվմայ), և կամիմք միշտ հսաղանդ մնալ հրամանաց ձերոց, մեք և արհիեպիսկոպոսք և եպիսկոպոսք և քահանայք և ամենայն կղերիկոսք եկեղեցւոյս մերոյ ։ »

Յունաննեւ էտի . յաշրտն Գրէիդը առ նոյն Խննով էնողնս գի .
Պատ է առ մայ . և Եկեղեցիս Հանաչելով զգլխաւորու-
թիւն հովուապետութեան և զիարդապետութիւն շնորհեալ 'ի
Տեառնէ ամենասուրբ Եկեղեցւոյդ Հովովմայ , եղեւ սիրելի
դուստր նորա ո :

Ի բարապատճենն Արինարայ էօն . “ Խններորդ դաս վեր-
նագոյն քան զամենեսեան պապիոս , նմանեալ քերովլըէից ո :

Ի ծողովն Ասոյ ասէն հարէ ժողովոյն 'ի սահմանադրութեանն .
« Այն եպիսկոպոսն Ակելանոյ գրէ թէ հնազանդիլ պարտ է
սուրբ և առաքելական Եկեղեցւոյն Հովովմայ , վասն զի հաս-
տատեալ է ուղղափառ հաւատով յառաքելցյն Պետրոսէ :
Քանզի որպէս մարմինն հնազանդի դիմույն , նոյնպէս ընդ-
հանուր Եկեղեցին , որ է մարմին Քրիստոսի , հնազանդիլ պար-
տի նմա , որ գլուխ 'ի Քրիստոսէ հաստատեցաւ Եկեղեցւոյ ո :

Ըստար դեսպան Անտոնիէլ կանոնիով առէ յարենէ Հովովմայ-
ցաց . « Որ միանգամ 'ի մէնջ ոչ դաւանի զաթոռոն Պետրո-
սի լինել ծայրագոյն , և զթահանայապետն Հովովմայ գլուխ
և հայր բոլոր աշխարհի և ժառանգորդ փականաց , այնպիսին
ուրացող է աւետարանի , Երուսաղեմայ և Լուսաւորչեան ա-
թոռոյ Եղմիածնի ո :

Այսչափ վեայութիւնք բերելէն ետե , թողլով ուրիշ
այլկայլ վեայութիւնները , անցնինք Պետրոսի առաքելցյն
գլխաւորութեանը , որոյ յաջորդք են սրբազան Պապերը , և ո-
նով կրկին անգամ ցուցած կ'ըլլանք սրբազան Պապերուն
գլխաւորութիւնը :

Բանք անսուր բերանայ Տեառն մերոյ առ Պետրոս . « Երա-
նիքն Աիմոն որդի Յանանու , զի մարմին և արիւն ոչ յայտ-
նեաց քեզ այլ հայր իմ որ յերկինս է : Եւ ես քեզ ասեմ զի
դու ես վեմ և 'ի վերայ պյոր վեմի շինեցից զեկեղեցի իմ .

և դրանք դժոխոց զնա մի՛ յաղթահարեսցեն . . . , « Այսն սիմն ահա սատանայ խնդրեաց զձեղ խորբալել իբրեւ զցորեան : Եւ ես աղաչեցի վասն քո, զի մի՛ պակասեսցին հաւասարք քո . և դու երբեմն դարձցիս և հաստատեսցես զեղբարս քո . . . : » Եւ տաց քեղ զփականս արքայութեան երկնեց . և զոր միանդամ կապեսցես յերկրի եղիցի կապեալ յերկինս, և զոր արձակեսցես յերկրի եղիցի արձակեալ յերկինս ա :

« Դրահան . « Որ զերագոյն ընտրելոց առաքելոցն դասուց անուանեցեր լինել զերանելին զզիւտրոս գլուխ սուրբ հաւատոյ հիմն եկեղեցւոյ . . . : Փակողն արքայութեան երկնից սուրբ առաքեալն Պետրոս . . . : Որ զէութիւն անձառելոյ միածնին յայտնութեամբ հօր 'ի վերուստ դաւանեալ, և երանականն արժանացեալ շնորհի վէմ անվանելի 'ի դրանց դժոխոց ա :

Այսուց . « Տէր Վատուած մեր որ զանուն գլխաւորի սըրբոյ առաքելոյն Պետրոսի անուանեցեր վէմ, և 'ի վերայ նորա շինեցեր զընդհանուր կաթողիկէ եկեղեցի ա :

« Յայտնութեած . « Ո՞եծ առաքեալն Քրիստոսի սուրբն Պետրոս վէմն հաւատոյ և հիմն եկեղեցւոյ . . . : « Պետրոս վէմն հաւատոյ և մեծն ամենայնի, երեսփոխանն Քրիստոսի, հաւանութեամբ և կամօք ամենայն առաքելոցն սրբոց ընտրեաց զարդարն Յակովոս և ձեռնադրեաց եպիսկոպոս Երուսաղեմայ . . . : « Ո՞ինն (այս ինքն Պետրոս) զկուսածին զմարդն Վատուած՝ որդի աստութոյ 'ի բնութենէ հօր դաւանեաց, որով 'ի Քրիստոսէ երանեցաւ հիմն եկեղեցւոյ եդաւ, և ըգփականս արքայութեան ընկալաւ . 'ի գլուխ առաքելոցն սըրբոց հաստատեցաւ լինել նոցա հրամանատու փոխանակ Քըրքիստոսի ա :

Գումբոր Լուսատունին 'ի հերթան Յանձնադադում . « Եւ արար զնա (զզիւտրոս) վէմ հաստատութեան ամենայն եկեղեցեաց ա :

Յայտն Արքանոյ հայրապետ . « Եւ Շմառոն որ վեճ ա-
նուանեցաւ , վասն հաւատոյ իւրոյ կոչեցաւ նավէմ : ... Եւ
Աիմովն գլուխ աշակերտացն » :

Խորենաց . « Փակողն և բացողն վերին արքունեաց » :

Գրէնու Եւրեկաց . « Քանզի և տէրն զայս եդ հիմն ե-
կեղեցւոյ իւրոյ ասելով առ նախնի դաւանողն Պետրոս . թէ
դու քո խոստովանութեամբ ես իրրե զվէմ հաստատուն և
անշարժ , և 'ի վերայ այդը վիմի շինեցից զեկեղեցի իմ , այս
բնքն զամենայն հաւատացեալս և ճշմարիտ խոստովանողս
համագոյ և զուգական երրորդութեան » :

Ներսէս շնորհաց . « Եւ զեւրական անուն վիմին »

Շնորհեաց նման զանշարժելին : ...

« Պլասյն ընտրեալ հօտին փոքու

թեազր զ անձաւած Սաստէր զնորհուրդն ոչ գիտելը » :

Եւրուս Լամբրոնաց . « Երկրորդ յետ Վրիստոսի զքեզ ու-
սաք ով Պետրոս , գլուխ յետ դիսոյն դու նստար աշակեր-
տացս . վեմ հաստատութեան բնաւիցս զքեզ էարկ 'ի հիմն
տաճարիս . զգառինսն և զոշինարսն 'ի ձեռու քո աւանդեաց ա-
րածել , յետ առնլոյ զգրաւական սիրոյն » :

Առջիս Շնորհացն . « Աիմոն վէմ , և Ե՞ր վասն վէմ , զի
վեճն անտեղիստալի է արկածիցն անձրեաց , և զարկեալ սեր-
մանսն ոչ ընդունի , և 'ի հարկանելն ոչ դդայ , և ոչ փոխէ
զվիմեղէն բնութիւնն իւր , այլ մանաւանդ զհարկանողն մնա-
սէ , և այսորիկ աղագաւ Աիմոն վէմ կոչեցաւ : ... « Խակ ատ
(այսինքն Պետրոս) վասն զի հայր լինելոց եր հոգեոր աղ-
գատոհմին և գլուխ և առաջնորդ , բոլորովին ընկալաւ զփո-
փոխումն անուանն . զԱիմոնն Պետրոս անուանեալ , որ
թարգմանի վէմ : Եւ 'ի վերայ այսր վիմի շինել խոստանայ
զեկեղեցին բարձրագոյն քան զամենայն ներհակս փորձու-
թեանց , որք են գրունք դժոխոց : ... և Պետրոս վէմ ա-
նուանեցաւ և 'ի հիմունս եկեղեցւոյ եղաւ , որ դրունք դժո-

խոց վեա ոչ յաղթահարեցին . . . և Եւ կացոց նոցա (այս ինքն առաքելոց) գլուխ և առաջնորդ և հիմն հաւատոց զերանիկն Պետրոս ։ :

Յաշանես Խրնիսցի . և Ընէպէտ ամենեքեան (այս ինքն ամենայն առաքեալը) գլուխորք էին, սակայն զՊետրոս նոցին գլուխ կարգէ, և ոչ միայն նոցա, այլ և գառանց և ոչխարաց և խոյոց գլուխ ընարե ։ :

Ուժն Խոսրով, և Պետրոս վէմ անուանեցաւ 'ի Տեառնե և հիմն եկեղեցւոյ եղաւ . . . Պատուա առաքելոց, . . . Փակող արքայութեան ։ :

Խճառիս . և Եւ 'ի վերայ պյտոցիկ հաւատոյ ետ նմա զփականս երկնից , և ետ զխոստովանութիւն նորա հիմն քրիստոնէութեան անշարժելի 'ի դրանց դժոխոց ։ :

Այս ամէն ուղղափառ հարց և հայթապետաց վկայութիւններէն ետքը բերենք նաև Յովհաննէս Որոտնեցիէն և Գրիգոր Տաթևացիէն մէ յմէկ վկայութիւն . որոնք թէպէտ շատ կողմանէ Ճշմարտութեան հակառակ կը զինին , բայց այս բանիս մէջ ակամայ կամօք Ճշմարտութիւնը կը խոստովանին հարաղամին պէս :

Յաշանես Որոտնեցի . և Տէրն մեր Կրիստոս զքորս յատկութիւնս ունի , որ միայն առանձին նմա վայելէ : Եաւս զի Կրիստոս է սկիզբն և հիմն եկեղեցւոյ , այսպէս ասէ Պօղոս . և զայս յատկութիւն ետ առաքելոյն Պետրոսի , յորժամ ասաց . դու ես վէմ , և 'ի վերայ այդք վիմի շինեցից զեկեղեցի իմ , Երկրորդ յատկութիւն , որ Կրիստոս միայն է գլուխս ամենայն հաւատացելոց , որպէս ասէ Պօղոս . և զայս գործս (այսինքն զգիսաւորութիւնն) ետ Պետրոսի , յորժամ ասաց , դու կոչեսցիս Աեփաս , որ է գլուխ , զի նա է գլուխ առաքելոցն . Երրորդ յատկութիւն է , զի Կրիստոս է հո-

վիւ եկեղեցւոյ , որպէս ասէ Աւետարանիչն , ես եմ հովիւ
քաջ , և ալին , և զայս շնորհեաց առաքելոյն Պիետրոսի յորժամ
քաջ , արածեա զոշնարս իմ , արածեա զգաուինս իմ : Չոր-
ասաց , արածեա զոշնարս իմ , արածեա զգաուինս իմ : Չոր-
րորդ յատկութիւն է , զի՞ Քրիստոս է զատաւոր , ըստ այ-
նըմ , թէ զամենայն դատաստան ետ որդւոյ , և զայս ասաց
պիետրոսի , զոր միանգամ կապեսցես յերկրի եղիցի կապեալ
յերկինս ու :

Դէքէր Տաղնեւացք . և Պարտ է զիտել զի յորժամ կամ-
ցան Քրիստոս զհօտն յանձնել յառաքեալն Պիետրոս , նախ
վասն սիրոյ հարցանէ : Եւ իբրև էառ զդրաւական սիրոյն ...
ապա յանձն առնէ նմա զհօտն իւր , զոր գնեաց արեամբ
իւրով ու :

Ինչ վկայութիւններ որ մինչեւ հոս բերինք , որոց նը-
ման պայծառ վարդապետութիւն զրեթէ և ոչ իսկ Յունաց
և Լատինացւոց մէջ կայ , ուրիշ մտքով չէ , բայց եթէ բա-
րենախանձ սրտիւ քարոզելու զծշմարտութիւն : Յուսամք որ
յազդայնոց շատերը յօժարակամ կը գտնուին ընդունել այս
ծշմարտութիւնը , որպէս զի չըլլայ թէ ինք իրենց հակառակ
երեխն , երբոր խօսքով կը զրուցեն թէ ազգային հարց վար-
դապետութենէն չեմք ուղեր խոտորիլ և գործով հակառակը
կը ցուցանեն : Ուստի կ'ըսեմք թէ ո՛վ որ հակառակի Նոռ-
մէական եկեղեցւոյն գլխաւորութեանը և ամենայն եկեղե-
ցեաց հովաւապետ ըլլալուն , զոր կը գաւանէին առ հասարակ
ամենայն հին եկեղեցիք այլեւայլ Քրիստոնեայ աղդաց քանի
որ անկէ չէին բաժնուեր , անոր միտքը կուրացեալ է կամ աղ-
դիտութեամբ կամ նախապաշարմամբ և կամ չարութեամբ .
անիկա կը հակառակի Պիետրոսի վիմի , անիկա կը հակառա-
կի և Քրիստոսի որ զՊիետրոս գլուխ առաքելոց հաստատեց ,
որս յաջորդք են սրբազն Պապերը . անիկա կը հակառակի
և իրեն սուրբ հարց Քրիստուանց և Ներսիսեանց : Եւ ին-

շուր կարելի է մի հօտ և մի հովիւ ըլլալ ըստ Քրիստոսի .
 կամ ի՞նչով կարելի է այլւայլ անդամներով մի մարմնի կաղ-
 թութեանը մէջ մէկ գլխաւոր գլուխ չը'լայ , իրեն ներքեւ ունե-
 նալով պղեայլ երկրորդական գլուխներ , որոնք նկատմամբ
 իւրաքանչիւր աղդին կրնանք համարել գլխաւոր գլուխ , բայց
 ոչ ընդհանուր եկեղեցւոյ կառավարութեանը մէջ : Եթէ մէկ
 է Քրիստոս , մէկ պիտի ըլլայ անոր եկեղեցին . մէկ և այն
 եկեղեցւոյն զլուխը . վասն զի եկեղեցի ըսածնիս , որ է ժո-
 ղով հաւատացելոց կամ բարոյական մարմնի Քրիստոսի , ա-
 ներկոյթ բան չէ , այլ երեւելի , ուստի տգիտարար կամ չա-
 րութեամբ կը մոլորին նորաղանդք երբոր կ'ընդունին եկե-
 ղեցւոյ միայն աներեւոյթ զլուխ զՔրիստոս , և ոչ երեւելի
 գլուխ երկրիս վրայ իրեւ փոխանորդ Քրիստոսի . որով
 Աւետարանին և առւրբ հարց խօսքերը , որոնք յայտնապես
 կը ցուցանեն եկեղեցւոյ երեւելի գլուխ մը , ոտքի տակ ա-
 ռած կ'ըլլան : Եթէ անոնց յիմարական խօսքը ստոյդ լլւար ,
 պէտք էր որ Հաւատամքին մէջէն վերցընեինք այս խօսքերը .
 և Հաւատամք 'ի միայն ընդհանրական և առաքելական եկե-
 ղեցին , և մեր Ճամագրքին մէջէն և Շաղաջեսցուք զամենա-
 կան Խստուած վասն միայնոյ սուրբ կաթողիկէ և առաքելա-
 կան եկեղեցւոյն : Ծաէ որ կ'ուզէ մէկը ինքզինքը ուղղափառ
 Քրիստոնեայ համարել , պէտք է որ Հաւատամքին ամէն
 խօսքերը ուղիղ հասկընայ , ապա թէ ոչ իրաւամբ իրեն հա-
 մար ընդհանրական եկեղեցին կրնայ հերետիկոս և հերձուա-
 ծող բառերը գործածեել . վասն զի այնպիսին խռտորեալ է ե-
 կեղեցւոյ և հարց ուղիղ վարդապետութենէն : Հերետիկոս
 բառը յունական բառ է , և կը նշանակէ ընդբակն , և այս
 անունը եկեղեցւոյ առաջին հերետիկոսներուն տրուած էր , ո-
 րոնք եկեղեցւոյ վարդապետութեանց մէջ զայս կամ զայն
 վարդապետութիւն իրը ընտրանօք իրենց սեպհականեր էին :

Վիտենք որ Հայոց աղջին ողջամբա մասէն և ոչ ոք
 յանձնառու կ'ըլլայ հետեւող ըլլալ նորաղանդից վարդապե-
 տութեանը, Հայոց ներեն ինծի թէ որ ես ալ դառնամ հար-
 ցլնեմ այս ողջամբա մասին, թէ որոյ անուամբը կը պար-
 ծիս, ոչ ապաքէն Լուսաւորչի և Ներսիսեանց անուամբը,
 եթէ այնպէս է, ի՞նչու չես ընդունիր անոնց ուղիղ վար-
 ե եթէ այնպէս է, ի՞նչու չես ընդունիր համաձայն է ընդհան-
 դապետութիւնը, որ ըստ ամենայնի համաձայն է ընդհան-
 րական եկեղեցւոյ վարդապետութեանը: Ուստի և փուժ տե-
 րական եկեղեցւոյ վարդապետութեանը, և ըստաւորչունիքն կը
 զը գըեղ ըստաւորչական, ըստաւորչունիքն կը
 կոչես, երբոր Լուսաւորչի ուղիղ վարդապետութեանը չես
 հետեւիր, որ կ'ըսէ յայտնապէս և Եւ արար զնա (այս ինքն
 զՊետրոս) վէմ հաստատութեան ամենայն եկեղեցեաց և.
 ապա ուրեմն կամ անունդ փոխէ կամ վարդապետութիւնդ,
 որպէս զի ինքն իրենդ հակառակ չերեխս: Եթէ քու Լուսա-
 ւորիչդ խոնարհեցաւ գնաց 'ի Հոսու Աեղբեսարոսի
 Պապին. և անկէշ առաւ իր պատրիարքական իշխանութիւ-
 նը Հայոց վրայ. մի՛թէ դու քան զ Լուսաւորիչ մե՞ծ ես որ
 չես ուղեր այս խոնարհութիւնը ցուցանել, ճանչնալով Հոս-
 մայ սրբաղան Քահանայապետը գլուխ ամենայն եկեղեցեաց: Եւ-
 թէ որդիք Արքահամու եք զգործս Արքահամու գործեսչիք, կ'ը-
 սէ Վիրքը. եթէ դուք ալ Լուսաւորչի որդիք եք, ապա և դուք
 Լուսաւորչի Ճամբան բանեցէ՛ք, և մի՛ խոտորիք անկէց՝ ա-
 կանց կախելով տգէտ և նենդաւոր մոլորեցուցչաց, որոնք ձեր
 հոգին կ'ուղեն կորուսանել: Եւ ինչպէս որ չեն դադրած
 ժամանակ ժամանակ աշգերնուս մէջ Ծանդրակեցիներ, Ծու-
 տէօրդիներ, Տաթևացիներ, հիմա ալ չեն դադրիք զձեզ
 մուրցընելու: Մեր քարոզած վարդապետութիւնը համաձայն
 է ձեր սուրբ հարց և նախնեաց վարդապետութեանը, զորն
 որ վերը շատ վկայութիւններով հաստատեցինք. թէ որ օ-
 տար է անկէց, մի՛ ընդունիք, բայց թէ որ համաձայն և
 չընդունիք զայն, զիացած ըլլաք որ Աստուծոյ բարկութիւ-

Նը կը հասնի ձեր վրայ . վասն զի կ'ըսէ սուբբ Գլոբը և շա-
ցէ թարկութիւնն Աստուծոյ ՚ի վերայ որդւոցն անհաւանու-
թիւն :

Ի վերջ խօսքիս դառնանք քիչ մ'ալ Մխիթարեանց
վրայ զրուցուած թշնամանաց խօսքերուն պատասխանա-
տուութեանը :

Յօդուածին հեղինակը Մխիթարեան հարց համար ալ
խօսք չժողուր որ չզրուցէ , իբրև թէ անոնք Հայոց աղին
վաճառող և մատնիչ ըլլան առ թշնամիս իր խօսքին համե-
մառ : Խայց գիտենք որ Հայոց ազգը դժբաղդաբար իրեն
բարերարաց դէմ ապերախտ գոնուիլը իրեն Ճակատակադիր
ունեցեր և շատ անգամ : Բաւական է միտք բերել Մեծին
Աներսեսի դէմ Արշակ թագաւորին ըրածները , սրբոյն Աս-
հակայ Պարթևի դէմ նախարարաց անիրաւութիւնը , Տրդառ
թագաւորին դէմ իշխանաց անօրէն վարմունքը : Մխիթա-
րեանք որ մինչև ցայսօր պաշտելի և պատուելի էին ընդհա-
նուր աղքէն իբրև աշխատեր և ուսումնասէր անձինք , հիմա
եղան մէկն ՚ի մէկ խարդախ և աղջառեաց անձինք : Ճշմար-
տութեան սէրը կը ստիպէ զլեզ հոս գէթ հարեանցի մը
յիշատակել Մխիթարեանց արդիւնքը , որպէս զի ցուցա-
նենք թէ ո՛րչափ կ'անիրաւի մէկը , երբոր անոնց ազգատեացի
անունն իւուտայ : Ուստի կ'ըսենք որ՝ եթէ ազգասիունն ու հայ-
րենաքիրութեան փաքրիկ կայծ մը կը վառի ձեր սրտին մէջն է , և
այն ալ թերեւ Մխիթարեանց արդեամբք , Մխիթարեանց
սրտին մէջ հրդեհ կը վառի : Եթէ գուք ազգասիրութեան
համար փաքրիկ զքչեր ըրեր էք , Մխիթարեանք իրենց կա-
րողութեանը հետ բաղդատելով մեծամեծ և անբաւ : Եհա
գեռ նոր գարձաւ Մխիթարեանց մէջէն ձեռագրաց վրայ
անխոնջ աշխատողներէն մէկը , տասնըմէկ տարի պանդըն-
տութիւն ընելով Հայաստանի լեռներուն և ձորերուն

մէջ : Այս միարանութիւնը չէ՝ որ այնչափ կրօնական ուսումնական և ազգասիրական գիրքեր հրատարակելով աղջ լուսաւորելու կը ջանայ : Այս միարանութիւնը չէ՝ որ վարժարաններ ու դպրոցներ բանալով կ'աշխատի աղջին ապագայ լոյսերը բարերեթ ընել : Խսեցինք և տեսանք Պօլուսոյ ողիւնայլ արուարձանները Ճեմարաններ բացուիլը աղջին իշխանաց նպաստիքը և ուրախացնք, բայց ո՞ւր են հիմա այն Ճեմարանները կը հարցընեմ, անպաղարեր մնացին ապառաժի վրայ ձգուած հունտի նման :

Վրդ ասոնց տեսնելով ու գիտնալով միթէ մեծ բան չէ Միսիթարեանց աղջին վրայ ցուցած ազգասիրութեան եռոնքու, և միթէ անկեց աւելի կրնանը պահանջել : Ուրով չե՞ն կրնար արդեօք Միսիթարեանը համարձակութեամբ բսել Պօղոս առաքերոյն առ Խորնթացիս բսած խօսքին համեմատ « Վրդ իւ իւիք պահատ իցեմ քան զլաւ առաքեալն ու միթէ չե՞ն կրնար կ'բսեմ իրենք ալ զրուցել թէ ինչո՞վ պակսեր ենք լաւ աղջասէրէ մը : Ուրիշ բանով չէ բայց եթէ Ճշմարտութիւնը խօսելով, թէպէտ և ծանր Ճշմարտութիւն մը : Վրդ այսչափ իրենց աղջասիրական ջանիցը և եռանդեանը փոխարէն այսպիսի դառն պտուղներ քաղել տալ և նախատակոծ ընել բոլոր աշխարհի առջեւ իրրեւ անպիտան և նկնդաւոր անձինք, և իրրեւ այնպիսի անձինք որ աղջին վրայ ամեննեին աշխատած չըւան, համերերեւու ապերախտութիւններ են : Ուստի գառնակսկիծ սրտիւ և հասալանք կը զրուցե աղջին համար իւրաքանչիւր Միսիթարեան . « Հատուցին ինձ չար փոխանակ ընդ բարոյ, ատելութիւն փոխանակ սիրոյ իմցյ ո : Հնիրաւի չե՞ն սպասեր աղդէն Միսիթարեանը իրենց արդեանցը փոխարէնը ընդունիլը, վասն զի միշտ մաքերնին ունին Քրիստոսի տեառն մերոյ խօսքը որ կ'ըսէ, ինչ որ բարիք ընէք, ըսէք միշտ, թէ « Օռառայը անպիտանք եմք, զամենայն զոր պարտն էաք առնել արարաք » :

Եյս խօսքերը զրուցելով չենք ուզեր ըստ թէ ազգեր նիս միշտ ապերախտ գտնուած էր Միհթարեանց, այլ անոր հակառակ մինչև այս վերջին մատ տարիներս իր երախտազիտութիւնը ցուցանելու չեղ գադրած գործով խօսքով և գրով, և անով իրենց բազուկները լուսացընել :

Բահաներնոււս արձան յիշատակի կեցած է Միհթարեանց վանքին դիւտնին մէջ ճշմարիտ աղջասէր անձանց նամակները, և տափդրութեամբ գուրս եղած գրութիւնները, որոնց մէջ եւ ըստուաշիտութեան նշաններ արեւու պէտ կը փայլին և որոնց մէջ Միհթարեանք յայտնապէս աղջին երկրորդ լուսաւորիք կը կոչուին : Խոկ բարերարութեամբք իրենց ջանիցը լիովին հատուցող եղած է այս վերջին մատ տարիներս բացի ուրիշներէն, արժանապատիւ Տատեան Յովհաննէս ամբարյան, որոյ գովիճիկ անունը տպագրեալ զրոց կետ անմահ պիտի մնայ Միհթարեան միաշանութեան մէջ և բոլոր աշխարհիս վրայ : Եյս երախտազիտութեան գործերը խօսքերը և զրութիւնները միտք բերելով, աւելի զարմանքով կըսենք, թէ ինչէն է ազդին վրայ այս մէծ և անակնկալ փոփոխութիւնը : Միհթարեանք առաջ ի՞նչ էին, հիմա ալ նոյն են, ամենեին չփոխուեցան, այս ինքն ազդին բարեացը համար աշխատող և Քրիստոսի բանին քարոզող : Արդեօք ճշմարտութիւնը բացայաց քարոզելնո՞ւն համար, զոր միշտ չեն դաշտած քարոշելու, տեսնուեցաւ այս անակնկալ փոփոխութիւնը, չըսենք բովանդակ ազդին վրայ, վասն զի կը լսենք և կը տեսնենք որ յաշդայնոց ոչ սակաւք հակառակ են՝ Ալխիթարեանց դէմ եղած անվայել և անարժան գրութեանց, որոնք առանձին տետրներով կամ լրագրաց մէջ հրատարակեցան : Եայց կը հարցընեմ հոս միանդամ, թէ այնչափ տեսակ տեսակ զբքերու մէջ որ ջանացեր են Միհթարեանք իրենց ազդին մէջ եկամուտ մոլորութիւնները մաքրելու և ընդհանուր եկեղեցւոյ Վլսոյն հետ միացընելու, մինչև հիմա

չեի՞ն տեսեր չեի՞ն կարդացեր . և այն ատեն ազգատեաց չե-
ի՞ն Ալսիթարեանք , հիմա յանկարծ եղան : Կամ թէ որ մէ-
կը իր աղդին պակսութիւնը դիմացը դնէ ու ջանայ ուղղե-
լու , ազգասիրութեա՞ն դէմ ըրած կ'ըլլայ . չե նէ յաղդա-
սիրութենէ շարժեալ ըրած կ'ըլլայ . կամ թէ աղդին պակ-
սութիւնը պաշտպանելը ազգասիրութի՞ն համարելու է :

Ազգասիրութիւն և հաւատք իրարմէ զատելու խնդիր-
ներ են . Ազգասիրութիւնը է գերագոյն աւանդ մը իրա-
քանչիւր ազգաց առանձինն պարգևեալ , և ամէն ազգ պար-
տական է իրենինը ամբողջ և անարատ պահել . իսկ հաւատ-
քը ոչ այսպէս . վասն զի հաւատք ըրածնիս ուրիշ բան չէ ,
բայց եթէ յայտնութիւն աստուածային , և զոր Վրիստոս
Տէրն մէր ընդհանուր ամէն ազգաց համար միօրինակ տուած
է առանց ամեննեին խտրութիւն ընելու և որոշելու . վասն զի
կ'ըսէ Պօղոս առաքելոյն ըերնով « Չիք խտիր ոչ հրեի և
ոչ հեթանոսի » : Ուստի եթէ մէկը ուղղափառ հաւատքը
պաշտպանելու ըլլայ , անով աղդասիրութեան հակառակ
դործած կ'ըլլայ . կամ թէ , նոր Ճշճարտութիւն մը որ աշ-
գին մէջ առաջ ընդունուած չըլլայ , ետքը թէ որ մէկը ըն-
դունի , անով աղդասիրութիւնը ոտքի տակ առած կ'ըլլայ .
ապա թէ ոչ պէտք չէր աղգերնիս Վրիգոր Լուսաւորչի ձեռ-
քով քրիստոնէական հաւատքը ընդուներ , աղդասիրութեան
դէմ չդործելու համար :

Իայց թէ որ չփացող մը Ամսիս լուագրոյն այս յօդուածը
ու միւս անցած լրագիւներուն ոմանց գրածները կարդայ , պի-
տի մակարերէ թէ Ալսիթարեան միանձունք արդեօք ի՞նչ
սարսափելի հայհցութիւններ , զրպարտութիւններ ու նա-
խատական խօսքեր գրեր և ըսեր են աղդին վրայ , որոնց չը-
կրնալով համբերել լրագրաց շարագրովները ու իրենց նման
աղդուերներ , կը յանդիմանեն անոնց տմարդութիւննը ու քը-
րիստոնէական եղբայրսիրութեան դէմ ըրած հայհցութեան

յանցանքները : Այսիթարեանք խղճմտանօք կը վկայեն թէ ազգին պատոյն և ամբողջութեանը դէմ այնպիսի բան՝ մը ըրած և խօսած չեն, որ արժանաւորին այսպիսի տմարդական գրութեանց . որովհետև գիտեն ստուգիւ . թէ զաղրը անպատուելով իրենք զիրենք նախատած կ'ըլլան : Միայն հաստատուն Ճշմարտութիւն մը Ճանչնալով եկեղեցւոյ Վայսոյն հետմութիւնը, և գլուխ եկեղեցւոյ ընդունելով Հռովհմայ Քահանայապետը, նաև ազդիս հայրապետացը հետեւելով, անկեց բաժնուողները ձերեւալ կոչեր են . և եթէ բաց ՚ի բաժնուելն հաւատոյ վարդապետութեան մէջ սխալողներ ալ եղեր են, անոնց ալ հերետիկոս ըսեր են :

Վարդու մը որ հաւատոյ ուղիղ վարդապետութիւնը կը դաւանի, անոր ոչ ոք կընայ հերետիկոս ըսել, Այսիթարեանց խօսքը հաւատոյ և սուրբ եկեղեցւոյ ուղիղ վարդապետութենէն խոտորեալներուն վրայ է, թէպէտ և այսպիսիներ բաղմաթիւ շըլլան ազգին մէջ : Չենք գիտեր թէ ազգին հիմակուան դաւանանքը ի՞նչ է, վասն զի մենք մեզմէ մասնաւոր հակառակասէր անձանց գրութիւններէն չենք ուզեր ընդհանուրին հետեւանք հանել, որոց հետեւանքը գիտենք որ շատ տիրական կ'ելլէ : Այսայն ընդհանուր ազգին մօտ ատեններուն դաւանանքին ճաշակը ունինք Հռովհմայ մէջ, որ հրատարակեցաւ 1820ին, որոյ մէջ ժողովով ստորագրեցին Ասոյ Կիրակոս կաթողիկոսը, Ա. պօլսոյ Պօղոս պատրիարքը, Եղմիածնի և Երուսաղեմայ արքեպիսկոպոսները և գործակալները, և ուրիշ անթիւ եկեղեցականք և իշխանք : Քայլ ափսո՞ս որ դժբաղդութեամբ անգործադրելի մասց Հրաւեր սիրոյն, և անոր հետ փափաքելի միաբանութիւնը . և այս բանիս պատճառ ուրիշ բան չէ, բայց եթէ բանսարկուին սատանայի խորամանկութիւնը, որ միշտ կը նախանձի բարւոյն, և անոր առջև արգելքներ և դժուարութիւններ կը հանէ :

Եհաւասիկ իմացանք Ախիթարեանց մի միայն յանցանքը ,
որով արժանաւոր կը համարուին ազդային լուգիրներէն այնչափ
տեսակ տեսակ անարդական խօսքերու : Երդեօք այս ուշիւնքնեւ
ըս / ըրոր կարդան խորենացւոյն ողբը , որ բաւականապէս յան-
ցաւոր կը ձգէ զազգը իր պակսուիներովզ , անոր ի՞նչ անարդա-
ցաւոր կը ձգէ զազգը իր պակսուիներովզ , անոր ի՞նչ անարդա-
ցաւոր կը ձգէ զազգը իր պակսուիներովզ , այս հեռ-
յալ և հերեւիսո բառերո Ախիթարեանք շիներ են թէ 'ի
նախնեաց ունինք , որո՞նց վրայ գործածեր են արդեօք նախ-
նիք . ո՞ր եկեղեցին ուղղափառ իմացեր են , ուսկից բաժնուուղ-
ները հերձեալ կոչեր են : Ինաւ պատմութեան մը մէջ շենք
կարդացեր թէ Երևանեան եկեղեցին Երևելեան եկեղեցին
բաժնուեր է , այլ միշտ հակառակը . և ՀՅունաց եկեղեցին ա-
ռաջին հերձուածը ընելով փոստայ ժամանակէն , արժանացաւ
այս անուան : Ուրեմն Ախիթարեանք ալ ըստ իւրեանց ճա-
նաշման ընդհանուր միութենէ Գլուխյն եկեղեցւոյ բաժնուող
Ճայերը հեցնեու որ ըսեն , յանցաւո՞ր կ'ըլլան : Ուէ որ շըն-
դունին , թող ներհակը աստուածաբանօրէն հաստատեն , և
ցուցանեն թէ իրենք միտցեալ են և ոչ հերձեալ , զոր յաւի-
տեան շկարենան պիտի ցուցանել : Ա ասն զի Ճաւատարին մէջի
սովորած ընդհանրախուն և առաւելական եկեղեցին ոչ երբէք պի-
տի , ըլլայ Ճայոց եկեղեցին , որ չունի առաքելականութիւն ,
վասն զի Օմագէոս առաքելոյն յաջորդութիւնը շմաց
Ճայաստանի մէջ . չունի ընդհանրականութիւն , վասն զի
բաց 'ի Ճայերէն ոչ որ զինքը կ'ընդունի . ուր Ճառվայ ե-
կեղեցւոյն կամ Պիտրոսեան աթոռոյն հետեւողըն են ան-
բաւք ամէն ազգերէ . ուստի և Ճայն ալ պատիւ պիտի հա-
մարէր իրեն , որդի կոչուիլը այսպիսի եկեղեցւոյ , որոյ վը-
րայ յայտնի կը տեսնուին Ճշմարիտ եկեղեցւոյ ամէն նշան-
ները :

Եմէն մարդ կը փափագի 'ի Ճշմարտութիւն գիմել , և Ճը-
մարտութիւնը իրեն քարոզողներուն ոչ ապերախտ այլ ե-

բախտապարտ կը գտնուի . միայն Անսիս լրագրոյն այն յօ-
դուածը շարադրողին և իւր համամիտ անձանց տրուած է ճը-
մարտութեան ունինդիր շըլլալ , այլ և խոժոռիլ , որպէս զի
ստուդի իրենց վրայ Վրիստոսի Տեառն մերոյ այս խօսքը
և Աիրեցին զիսաւար առաւել քան զլոյս զի էին դործը իւ-
րեանց շարութեան ։ Զարութիւն չենք ուզեր տալ բոլորին ,
բայց տղիտութիւնը կրնանք տալ բազմութեան , որով լաւ
կը համարին մութի մէջ պտըտիլ քան թէ լոյսը ելլել : Ար-
խիթարեանք աստուածասիրութենէ և յընկերսիրութենէ շար-
ժեալ եթէ քարողեն զՃմարտութիւն քրիստոսական կրօնի
և ազգային աւանդից , միթէ անով կ'ուզե՞ն տիրապետել իւ-
րաքանչիւրին խղճմատանաց վրայ և բռնի համոզել . բնաւ եր-
բէք չեն ունեցած այս գիտաւորութիւնը :

Կան բազումք հայոց ազգէն որ կ'ուզեն լսել զՃմար-
տութիւն և գալ յուղղութիւն . բայց և միանգամայն չեն ու-
զեր իրենց ազատութիւնը կորուսանել ազգային և ծիսական
սովորութեանց և արարողութեանց և աւանդութեանց մէջ .
Օնոյնը և Արիթարեանք կը փափագին հազարապատիկ ա-
ռաւել , և գուցէ այս բանիս համար ալ է որ երբեմն վիշտ
քաշեր են իրենց եղբայրներէն : Օնոյնը կը փափագին նաև
Պետրոսեան աթոռոյն ժառանգակալները , որ ոչ երբէք ու-
նեցած են ազգային հին սովորութիւները և ծէսերը փոխե-
լու գիտաւորութիւնը . վասն զի յայտնապէս կ'ըսեն « Ու
ինչ է նորոգելի ։ Հապա կը փընտուեն ամէն ազգերէն ընդ-
հանրական և առաքելական եկեղեցւոյն ուղղափառ հաւատքը
և անոր Կալիսյն հնազանդութիւնը : Ինչպէս որ յայտնի կը տես-
նուի թագաւորող Պիոսի իններորդին 1848ին առ Լճեւելեայս
գրած շրջաբերական թղթէն : Իսկ թէ երբեմն զարտուղած
ալ երեկի Հռովմայ գահը այս արդար գիտաւորութենէն , պէտք է
զըստցել Ճմարտութեամբ , թէ « Լզդ քո և քահանայտ-
պետք մատնեցին զքեզ ։ »

Այսափ առ ժամս բաւական կը համարինք ճշմարտա-
ուէր մարդու մը . իսկ պնդագլուխ յամառեալ մարդկանց , և
ոչ սուրբ Եւետարանը բաւական եղեր և համոզելու , ինչ-
պէս են այսափ տեսակ աղանդաւորներ և հերետիկոսներ .
ուստի չենք համարձակիր հարկաւ մենք մեր քարոզութիւնը
սուրբ Եւետարանէն վեր դնել ու աւելի զօրաւոր . հապա-
մայն կըսենք թէ որք « Առվակսի և մարդարէից ոչ լսեն ,
և ոչ թէ 'ի մեռելոց ոք յարիցէ հաւատասցեն » :



ուղարք մեջ միշտ կա մէրք ուստի պարագաներ
ու մէջ հանարանի և ըստ ։ Այնուազաւ, ուստի և առջևան
ասիստի և մէջորք լմառաւով զմբաճաշաւու ընթիւ ու ։
Չն չմանելու արձաւ և ըմանելու արձաւու ու ըմանուու
ու ըմանուու արձաւ արձաւ Յ կամ արձաւու ու ըման,
ոչինչ մնայն ու Ֆ ու զման ունաց առ արձաւ և չման
առ մէրախան ոչ չմանօ ։ Եղածայուն ընդու մը ունաց
ու չման ու ու ։ Սրմախարման պատճի առանուածի
միջի ցուցէն և ցուցավելուցին մի միարք ու առջև
Ո և մասն սրմախան ու մասն ։ Շնորհաւանիք ու
քաջ հաջարք մաս մասանի ոչ արաշ ։ և պարզու և ոչ
ցուցաւ առաջարք երաշնիք առաջարքաւ և առաջարք
առաջ պարզ ու սրբաւ ։ ցուցի արարարու ճրիւ ։ ուստի և
պարզաւ ու ու մասն պարագաներ խոնց բազուարանի համ
եացաւու մասն մի խու ։ Վեհան ասիստացաց ։ առ
և զաքր, մէջմէջացուաւու դարյա ուստի ցուք լուսու ժամ ու
ալուսունց և ու ու ։ միամի ասկանէ շաբաց

